

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

<< ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ-ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ >> ՓԲԸ-Ի 2019-2022 թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ա. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ 2019

Բովանդակություն

Նախաբան	3
1. Տարածքի բնակչության հավաքագրման շարունակում, սպասարկող ազգաբնակչության քանակի ավելացում	4
2. Բժշկական սարքավորումներով համալրում	4
3. Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	5
4. Կադրերի հագեցվածության ավելացում և նրանց մասնագիտական որակավորման բարձրացում	5
5. Կենսաթոշակառու և համատեղությամբ աշխատող բժշկական կադրերի աստիճանական փոխարինում երիտասարդ մասնագետներով	6
6. Բնակչության շրջանակներում առողջ ապրելակերպի, ծխելու, նստակյաց կյանքի վնասակարության, սպորտով զբաղվելու անհրաժեշտության քարոզչություն	6
7. Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի ապահովման բարելավում	7
8. Ապահովագրական ընկերությունների հետ աշխատանքային ծավալների մեծացում	7

Նախաբան

<<Էներիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա >> ՓԲԸ-ն հիմնադրվել է 1991թ.-ին իտալական 'ԷՆԻ' /իտալ. Ente Nazionale Idrocarburi/ պետական նավթաարդյունաբերական ընկերության կողմից: Իր անունը ստացել է 'ԷՆԻ' ընկերության հիմնադիր Էներիկո Մատտեի պատվին:

Պոլիկլինիկայում գործում է առողջության առաջնային պահպանման հետևյալ ծառայությունները

- ընտանեկան
- մանկաբուժական
- թերապևտիկ
- ակնաբուժական
- քիթ-կոկորդ-ականջաբանական
- ներզատաբանական
- նյարդաբանական
- ինֆեկցիոն
- վիրաբուժական
- մաշկավեներոլոգիական
- ֆթիզիատորի
- գինեկոլոգիական
- սոնոգրաֆիկ
- ռենտգեն
- ֆլյուորոգրաֆիկ
- կլինիկական
- բիոքիմիկական

Քիթ-կոկորդ-ականջաբանական կաբինետը հազեցած է Շիրակի մարզում միակ լսողության ստուգման աուդիոմետրիկ սարքով: Պոլիկլինիկան սպասարկում է 27000 ազգաբնակչություն: Հազեցած է ժամանակակից բուժ. տեխնիկայով, արդեն 1 տարի է պոլիկլինիկայում գործում է նոր ժամանակակից գինեկոլոգիական կաբինետ: Իր գործունեության ընթացքում պոլիկլինիկան համագործակցել է Հայաստանում գործունեություն ծավալող մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են WORLD VISION, 'Միջազգային Կարիտաս', IRD, MSF/ MEDECINS SANS FRONTIERES ARTSEN ZONDER GRENZEN ընկերությունները:

1. Տարածքի բնակչության հավաքագրման շարունակում, սպասարկող ազգաբնակչության քանակի ավելացում

Ներկայումս << Գյումրու Էներիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա >> ՓԲԸ-ն սպասարկում է շուրջ 27000 ազգաբնակչություն, որից մոտ 20000-ը մեծահասակներ են 7000-ը՝ մինչև 18 տարեկան ազգաբնակչություն: Ընտանեկան բժիշկների և տեղամասային թերապևտների կողմից սպասարկվող տարածքներում հաճախակի պետք է կատարվեն շրջայցեր և ազգաբնակչությանը տեղեկացվի պոլիկլինիկայի տեխնիկական, մասնագիտական բարձր զինվածության մասին, ինչը հնարավորություն կտա ավելացնելու սպասարկվող ազգաբնակչության քանակը, ապահովելով հավելյալ ֆինանսական մուտքեր:

2. Բժշկական սարքավորումներով համայրում

Պոլիկլինիկան անհրաժեշտություն ունի նոր բժշկական սարքավորումներով համայրվելու: Ֆինանսական հնարավորության դեպքում հատկապես անհրաժեշտություն կա ձեռք բերելու հետևյալ ժամանակակից բուժական սարքավորումները.

- ✓ Էխոսրտագրության տվիչ, որը հնարավորություն կտա կատարելու սրտի էխոսկոպիկ քննություն:
- ✓ Դուպլեքս տվիչ, որը հնարավորություն կտա կատարելու զարկերակների, երակների դուպլեքս հետազոտություն: Հատկապես կարևոր նշանակություն ունի այս հետազոտությունը կապված պոլիկլինիկայում հսկվող հղիների համար: Շատ հաճախ դուպլեքս հետազոտության բացակայության պատճառով հղիները ուղեգրվում են այլ բուժհաստատություններ տվյալ հետազոտությունը անցնելու համար, ինչը ավելորդ դժվարություններ է ստեղծում հղիների համար: Բնչպես նաև հաճախակի տվյալ հետազոտության կարիք են ունենում շաքարային դիաբետով տառապող հիվանդները:
- ✓ Կլինիկո-լաբորատոր սարքավորումներ

Այս սարքերի ձեռքբերումը հնարավորություն կտա ընդլայնելու պոլիկլինիկայում կատարվող հետազոտությունների տեսակները:

Տվյալ հետազոտություններ կատարելու հնարավորությունը կապահովի ազգաբնակչության բուժ-սպասարկման որակի բարելավում և ճշգրիտ ախտորոշում, ինչպես նաև կստեղծի այլ հավելյալ ֆինանսական մուտքեր՝ պոլիկլինիկայում չգրանցված ազգաբնակչությանը հետազոտելու հաշվին:

3. Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ

Պոլիկլինիկան շահագործման է հանձնվել 1991թ.-ին: Այդ տարիների ընթացքում կատարվել են վերանորոգման մասնակի աշխատանքներ:

Ներկայումս խիստ անհրաժեշտություն կա հատկապես հասակի, սանհանգույցների, կոյուղատարների վերանորոգման: Ըստ առաջնահերթության պետք է կատարվի առավել անմխիթաբ վիճակում գտնվող սենյակների հասակի վերանորոգման աշխատանքներ: Անհրաժեշտություն կա պոլիկլինիկան համալրել տեսախցիկներով և հակահրդեհային սարքավորումներով, որոնք կապահովեն պոլիկլինիկայի աշխատանքների անվտանգությունը: Պոլիկլինիկայում առանձնացնել որոշակի տարածք և համապատասխան կահավորումից, վերանորոգումից հետո օգտագործել որպես արխիվային նյութերի պահման սենյակ:

4. Կադրերի հագեցվածության ավելացում և նրանց մասնագիտական որակավորման բարձրացում

Անհրաժեշտ ֆինանսական հնարավորությունների դեպքում պոլիկլինիկան կարիք ունի համալրվելու որոշ նեղ մասնագետներով՝ ուրուլոգ, սեքսապաթոլոգ, նյարդավիրաբույժ և այլն: Համապատասխան երիտասարդ մասնագետների առկայության դեպքում տվյալ մասնագիտությունների գծով նրանց ընդգրկել պոլիկլինիկայի աշխատանքներում, ինչի արդյունքում պոլիկլինիկան կապահովի առավել ընդգրկուն բուժ-ծառայություններ: Բժշկական ազնակազմի շարունակական վերապատրաստումների միջոցով բարձրացնել բժշկական անձնակազմի մասնագիտական որակները, ապահովելով ժամանակակից բժշկական նորմերին համապատասխան սպասարկում:

5. Կենսաթոշակառու և համատեղությանը աշխատող բժշկական կադրերի աստիճանական փոխարինում երիտասարդ մասնագետներով

Ներկայումս պոլիկլինիկայում աշխատում են մեծ թվով համատեղող բժիշկներ, ինչի պատճառով չեն ապահովում համապատասխան աշխատաժամանակ, որը բերում է ազգաբնակչության կողմից օրյեկտիվ դժգոհության: Տվյալ խնդրի լուծման համար դիմել ՀՀ առողջապահության նախարարություն, խնդրանքով ապահովել համապատասխան նեղ մասնագետներ: Հատկապես անհրաժեշտություն կա բժիշկ-լաբորանտի, բժիշկ-ռենտգենոլոգի, ակնաբույժի, ընտանեկան բժիշկների և տեղամասային թերապևտների:

6. Բնակչության շրջանակներում առողջ սպրեյակերպի, ծխելու, նստակյաց կյանքի վնասակարության, սպորտով զբաղվելու անհրաժեշտության քարոզչություն:

Պոլիկլինիկայի սպասարկման ենթակայության տակ գտնվող դպրոցներում կազմակերպել սեմինարներ, զրույցներ, ֆիլմերի դիտումներ, որտեղ խոսվում է ծխելու վնասակարության, սպորտով զբաղվելու առավելության, ճիշտ սննդակարգի մասին:

Պոլիկլինիկա դիմող ազգաբնակչությանը բաժանել հատուկ բուկլետներ, որոնք կգովազդեն առողջ սպրեյակերպ: Կատարել համապատասխան քարոզչական աշխատանքներ՝ պոլիկլինիկայի միջանցքներում, բժիշկների սենյակներում փակցնել համապատասխան բովանդակությամբ ազդարարագրեր:

7. Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի ապահովման բարելավում

Խրոնիկական՝ շաքարային դիաբետ, հիպերտոնիկ, պարբերական հիվանդություններով տառապող հիվանդներին անվճար հատկացվող դեղորայքի անհրաժեշտ քանակի և ժամանակին ապահովում:

8. Ապահովագրական ընկերությունների հետ աշխատանքային ծավալների մեծացում

Սոցիալական փաթեթի շահառուների շրջանում համապատասխան քարոզչական աշխատանքների իրականացման շնորհիվ ավելացնել պոլիկլինիկայում սպասարկվող սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատողների քանակը, նպատակ ունենալով ավելացնելու պոլիկլինիկայի բյուջեն, ինչը հնարավորություն կտա ձեռք բերելու պոլիկլինիկային անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ, որը կապահովի պոլիկլինիկայի աշխատանքների որակի և սպասարկման բարձրացում: